

անցաւ 1899 թ. դեկտեմբերի 26-ին տուած աշակերտական գրական հանդէսը, որ կէս լուրջ և կէս զաւեշտական բնաստութիւն ունէր: Խօսուեցաւ հայոց ժողովրդական գրականութեան և վիպասանութեան մասին: ապա արտասանուեցան «ուսերէն» հայերէն և դերմաներէն լեզուներով ոտանաւորներ ու արամախօսութիւններ: Ներկայացրին նաև Պարոնեանի Մեծագատիւ Մուրացիականերից մի կտոր, որ և շատ յաջող անցաւ: Սակայն ամենից լաւ տպաւորութիւն արին աշակերտների իրենց գաւառաբարբառներով արած պատմութիւնները:

Այս բոլորը մէջ ընդ մէջ համեմուտ էր ժողովրդական երգերով և նուազներով:

Մեր Գպրոցական հանդէսներին ներկայ են լինում Գպրանցի հոգաբարձուները ուսուցիչները, աշակերտները և մեծ բազմութիւն հայ քաղաքացիներէց: մանաւանդ աշակերտների ծընողներն ու ազգականները: այնպէս որ Գպրանցիս հանդիսարանը փոքրութիւն է անում այդպիսի մեծ բազմութեան համար: Ահա մեր հանդէսների միակ անյարմարութիւնը և եթէ սորա վերայ էլ աւելացնենք նաև այն, որ հանդէսների ժամանակ սակայն անքան ենք լինում անթուներ մուրալ մօտակայ տներից, հասկանալի կը լինի թէ ո՞րքան դժուարութեամբ ենք կարողանում գլուխ բերել մեր դպրանոցական հանդէսները\*:

Հ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆՅ.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք



Ս. Պատրիարք Հայրը զեկտ. 31-ին գիշերը Ազգ. պատրիարքարան մնալով յունուար 1-ի առաւօտը Մայր եկեղեցւոյ ժամերգութեանց ներկայ պանուեցաւ և նոր տարուոյ աթիւ գեղեցիկ քարոզ մը խօսելով յորդորեց ժողովուրդը որ ներկայ տօնական օրերու մէջ մանաւանդ կարօտեալներու նպատակով զանոնք ալ իրենց ուրախութեանց մասնակից ընէ:

Ն. Սրբազնութիւնը յետոյ պատրիարքարան ելլելով, ընդունեց Մայր եկեղեցւոյ քահանայից գասուն, թաղ. խորհրդին, Ազգաախնամի Տեսօրէն խորհրդին և Գպրաց գասուն շնորհաւորութիւնները:

Կայս. Իրատէով պետական վարժարաններն ընդունուած հայ ուսանողները խմբովին պատրիարք-

\* Սակայն կրկնակի քաղցր են դժուարութեամբ մեզ բերուած յարողութիւնները: ԽՄԲ.

քարան գալով նոյն օրը, Ամանորի աթիւ իրենց շնորհաւորութիւնները մատուցին և Ս. Պատրիարք հօր աջը համբուրեցին:

Նոյնպէս Ս. Յակոբայ Ազգ. Որբանոցի 20-ի չափ որբեր՝ Ս. Պատրիարք հօր ներկայանալով, իրենց բոլոր ընկերակիցներուն կողմէ շնորհաւորական ուղերձ մը մատուցին և օրհնութիւններ ստացան:

— Յունվ. 2-ի առաւօտուն Ս. Պատրիարք Հայրը քարոզ խօսեցաւ Բերայի Ս. Երբորդութիւն եկեղեցւոյն մէջ, բոլորովին նոր նիւթի մը՝ Հին և նոր տօմարներուն և անոնց տարբերութեանը վրայ, դիտնականօրէն և աստղաբաշխօրէն ապացուցանելով թէ Արեւմտեան Տօմարն է ամէնէն ուղիղը, Բայց, յարեց Ն. Սրբազնութիւնը, քանի որ Արեւելքի մէջ կապրինք և զմեզ շրջապատող ազգերըն ու ժողովուրդները Հին տօմարներն ընդունած են, մենք ալ պէտք է որ այդ ընդհանուր սովորութեան հետեւինք, ինչպէս որ կրնենք:

— 1900 տարուոյ Իգմիրեան գրական մրցանակին մասնակցելու համար յանձնաժողովին զրկուած են 1. Եւզոկիոյ հայոց գաւառաբարբառը. աշխատութիւն Յովհ. Գաղաձեհանի: 2. Աւսումնասիրութիւն Շարականներու վրայ, գործ պ. Բժշկեանի՝ Պարսկաստանէն. 3. Աւսումնասիրութիւն հայ Ամիրաներուն. գործ Մրմիւնի. 4. Եղիսաբեթուպոլսի Հայերը. աշխատասիրութիւն Հ. Գոպրիկեան Մխիթարեան վարդապետին: 5. Գիււան հայոց պատմութեան. 8. Գիււա քահանայի: 6. Հայ բոշաները՝ Վրթմանէս Փափազեանի:

— Ս. Պատրիարք Հայրը օրհնութեան գեր մը զրկելով Բրօյլիտէնսի (Ամերիկա) Որբանամ Տիկնանց՝ ընկերութեան անդամահիններուն, գոհունակութիւն յայանած է նոցա գործունէութեան համար և քաջալեր կարգացած է:

— Ս. Պատրիարք Հայրը Ս. ծննդեան տօնի աթիւ քարոզ խօսելով Մայր եկեղեցւոյ մէջ, բացարեց սա կարևոր կէտը, թէ մեր նախնիք ինչո՞ւ Յունուար 6-ի օրն ընտրած են Ս. ծննդեան և Մկրտութեան տօնն ի միասին կատարելու համար:

— Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Երեմիա Ս. Արքեպս. Յ. Սահակեան կարճաակ հիւանդութենէ մը վերջ, յունվ. 7/19-ին վախճաներ է: Յուդարկաւորութեան հանդէսը կատարուած է շր. օրը:

Հոգեւոյն Տ. Երեմիա Սրբազան ընկ Խարբերցի էր, և գրեթէ կէս դարէ ի վեր անդամ Ս. Յակոբեանց միարանութեան, Ի սկզբան Երուսաղէմի միարան Գաւթի արքեպս.-ին աշակերտած և ապա Յովհաննէս պատրիարքէն վարդապետ ձեռնադրուած է: Երուսաղէմի Միարանութեան կողմէ երկու նուիրակ զրկուած է Ռուսաստան, ուր 5—6000 ոսկի հաւաքած և իր հոգեբուրդե քարոզնե-

րով մեծ հոշակ հանած է հոն, մանաւանդ իր քաղցր ու ներդաշնակ ձայնով և շարականադիտութեամբ:

Իր նուիրակութեան առաջին շրջանին Գէորգ Մեծագործ կաթուղիկոսը շատ գնահատած ու սիրած է զինքը, և եպիսկոպոս ձեռնադրած, Վերջին կաթուղիկոսական ընտրութեան առթիւ, 4 ընտրելիներէն երրորդն եղած էր: Իր ամբողջ հարստութիւնը, որ 1000 ոսկւոյ չափ կը կարծուի, կտակած է Երուսաղէմի Վանքին:

—Ս. Պատրիարքի վերջին շրջաբերականին վրայ, Պօլսոյ զանազան թաղերէն նպաստից յանձնաժողովին զրկուած նպաստներուն գումարը հասած է 300 ոսկիի:

—Բերացի գեղազործ լատին պր. Լինարոս Վարդալիտի մեռնելով Աղգ. Տիւնգանոցին կտակած է 100 Օսմ. ոսկի և Ս. Յակոբի Աղգ. Որբանոցին 50 ոսկի:

### ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԸ ԵՒ ՅԱՆՔԸ

Սերմնացան մշակ ոչ միայն պէտք է օտար սերմեր ցորենահասէն զստէ, այլ ևս նոյն իսկ վճիտ ևս ցամփած նասիկներ ևս որոշի կրկին ևս կրկին մտղիւով, յստակելով այնպէս որ մտառը հասիկներ մեան գեր ևս լեցուն:

ՀԱՅՐԻԿ

Տեսնում ես, իմ սրտես բոռնիկ, որ մեր գիւղական ժողովրդի հողագործութեան վիճակը նոյն հնուրեան իսկնաւորութիւն մեզնի, դեռ հիմ հիմ դարերու մեջ կը քայքայուի. մեր հողագործութեան առեւն աշխատութիւններ դառնալիս սանջանք կ, մեր քանկուցած գործիքներ՝ անսաշ, անարուեստ ևս կուպիտ շինուածներ են, որ չեք միայն զմեզ կտակելն, այլ առաւել մեր խեղճ անխօսուն անասուններ:

ՀԱՅՐԻԿ

Ինձ բռնում է որ մեծ պէտք է յարմարեցնենք մեր ուսմանները մեր ներկայ բարեբերի դրութեանը, ևս ուսումնասիրենք այն խնդիրներն, որոնց պահանջ ունի հասարակութիւնը:

ՅԱՆՔԻ

Էտաներն այնպէս են կարծում, որ հողի լաւ կամ վատ արդիւնաւորութիւնը ոչ թէ ցանկելուց և սերմերից կախումն ունի, այլ եղանակից, եթէ Աստուած տայ, եղանակը լաւ լինի.—հունձնառատ կլինի, ընդհակառակը, երբ եղանակը վատ է, որ-

քան կուզեն թող մշակեն երկիրը, լաւ պարարտացնեն, թէ կուզ ամենալաւ տեսակի սերմեր անգամ ցանեն, զարձեալ արդիւնք չի ստացուի, Բայց միթէ ճիշտ է այդպիսիների կարծիքը:

Բանից երևում է, որ լաւ հունձը շատ պատճառներից կախումն ունի, այն է՝ ցանող սերմերի յատկութիւնից, հողը լաւ կամ վատ մշակելուց և պարարտացնելուց, եղանակի լաւութիւնից ևն. սրանցից իւրաքանչիւրն ըստ իւր տեսակի որոշ չափով ունի իւր բարեբար ազդեցութիւնը: Որպէս զի լաւ հունձ ստացուի, պէտք է որ այս բոլոր պայմանները միանան առանց բացառութեան: Ապարդիւն կանցնի բոլոր աշխատանքը, եթէ սերմերը լաւ են, բայց հողը վատ է մշակած, և կամ, եթէ սերմերը լաւ են և հողը խնամքով է մշակած, բայց եղանակը անյաջող է, Աւրեմն ինչ պէտք է անէ երկրագործը այնպիսի դէպքում: Նա պարտաւոր է գործ դնել այն բոլոր միջոցները, որ իրենից կախումն ունին, Իսկ մարդուց շատ բան կախումն ունի, նա կարող է լաւ և խելացի կերպով մշակել վարելահողը, ժամանակին և որոշ չափով պարարտացնել, ցանելու համար ընտրել լաւ սերմնացու և յարմար եղանակ ևն, Երբ այս բոլորը որքան կարելի է լաւ և յաջող կերպով գլուխ դայ և մարդ խելացի կերպով աշխատի գործ դնել իւր բոլոր միջոցները, այն ժամանակ միայն կարելի է ասել, որ մնացածն այլ ևս մարդուց չէ կախուած: Որքան էլ վատ լինի եղանակը, այնու ամենայնիւ լաւ արտից կարելի է մի բան յուսալ, իսկ եթէ եղանակը ևս լաւ լինի, անկասկած երկիրը գիւղացու ամբողջ աշխատանքը հարիւրապատիկ կը վարձաբերէ, և այն ժամանակ միայն ամէն որ կմտաբերէ անտուտ հին առածը՝ որ դարեւոր փորձառութեան համառօտ ամփոփումն է, «Ինքն իրան օգնողին Աստուած էլ կօզնէ»:

Յանքը գիւղացիների համար մի այնպիսի սովորական բան է դառել, որ կարծում եմ հարցնելն անգամ աւելորդ է, թէ ինչու ցանքի ժամանակ այս և ոչ այլ կերպ են վարում, թէ ինչու գործ են ածում այս և ոչ ուրիշ սերմնացուներ և այլն: Բայց միթէ մեր այժմեան նոյն իսկ ամենախելացի գիւղացին կարող է սովորական գիւղատնտեսական գործերի մասին պարզ և որոշ տեղեկութիւններ հաղորդել. նա կարող է միայն այսօր ասել, որ «Այսպէս են արել մեր պապերը, այսպէս էլ մենք կշարունակենք», նոյն պատասխանը կտար գիւղացին նաև վար ու ցանքի մասին, Մեր նպատակը չէ այստեղ մանրամասնօրէն նկարագրել վար ու ցանքի ամբողջ գործողութեան ընթացքը, այլ կաշխատենք գիւղացու գիտցածից որքան կարելի է աւելի տեղեկութիւններ հաղորդել միմիայն սերմնացու հատիկների և ցանքի մասին: